

Ոչ ամպք բարիանայթ  
 Կայծականց 'ի ցայտ,  
 Ոչ երկիր ժայթքեալ հուր ընդ նովաւ,  
 Սասանի երբեք  
 Սիրտն ահաբեկ,  
 Ի փառացըն մահ լեալ դիմազարաւ :

Ո՛վ բաղդ նախանձողդ,  
 Ո՛վ կոյր և յողողդ,  
 Ընդ առաքինւոյն դու զուր մըրցիս .  
 Անվէր և անխոց՝  
 Ըզաստից քոց՝  
 Իբրև ժայռ ընդ ծով՝ վանէ զալիս :

Ոչ բաղդ միայն քեզ,  
 Ո՛ր թեմիտակլէս,  
 Ա.Ս. և հայրենիդ աշխարհ բընիկ,  
 Բազկաւ քով փըրկեալ,  
 Քեզ դարանեալ՝  
 Ըտիբրկողդ արար տարաշխարհիկ :

Դու մի՛ վըհատիր,  
 Հայեաց դու, զարձիր,  
 Ահա կողկողին առ ոտիք քով՝  
 Բաղդ քո և աշխարհ,  
 Կոր և խոնարհ .  
 Անխակալիդ ածեալ գորով :

ՅԵՐԻԿՐԵԱՒ Ի Հ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻԻԶ  
 ԱՐՏԵԳԻՍԿ. ՍԻՒՆԵՍ

ՊԵՏՐՈՍ ՄԵՏԱՍԱԶԻՈՅ

Օ Ր Հ Ա Ս Ա Կ Ա Ն Ո Մ Ն

Մի ոտս արդէն 'ի տապան, ես 'ի վայրէջ յայն պատրաստ,  
 Զ 'ի հող անդէն 'ւ 'ի միխիբ լուծանիցիմ՝ գատապարտ .  
 Իշխիցեմ՝ ես, սվ Աստուած, 'ի գուլթ ամեւ զքո զայրոյթ՝  
 Եւ դիմել ծոցըդ յանքոյթ ՚ .  
 Իմ չիք քեզ այլ 'ի նըւէր՝ 'ի մեղանաց քաւութիւն,  
 Բաց 'ի զոհէս ազազուն և յորացեալ մահագոյն .  
 Վա՛յ բարութեան քում անհուն, շընորհք քեզ, Տէր, մեծապէս,  
 Թէ զայն առ քեզ ժողովես :  
 Եհէ տըրոց մեծագին, զի հոյակապ պատարագ,  
 Ո՛ր այս նըւէրքըս իցեն, քանի մեծ են իմ փախագ .  
 Եւ զիարդ ժամն է պատկան, — մինչ ամենայն է եղծեալ  
 Յաչա աշխարհի անարգեալ :  
 Սակայն այնպէս, իմ փըրկիչ, 'ի յայս վիճակ չարալից,  
 Միայն այս է զոր կարեմ, զի այս ևեթ մընայ ինձ .  
 Հազար եղունկ է ընդ այն՝ զի՛ նդ միտ ամի անագան  
 Ըզտըրտմալիբ զայս վախճան :  
 Յողորմ պայման անկեալ կամ, զորութիւն զիս լըքանէ,  
 Թալուկ զինև, ընկճիմ՝ ես, սիրտս 'ի ծոցիս բարբախէ,  
 Վախճան իմ՝ դայ մերձենայ . 'ի մահուանէ պակուցեալ՝  
 Խիթամ ըզշունչ առնուլ տալ :  
 Ահաւասիկ եհաս ժամն . տանջի հողիս 'ի վարանս,  
 Հաս 'ի թիկունս, իմ փըրկիչ, և շընորհեա՛ գու ինձ զայս,  
 Զի զհառաչանս իմ՝ յետին և ըզտագնապ ցաւագին  
 Առ ոտս հեղից քոյ խաչին :

ՓԱԹԻՒԲՈ